



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2017 թ. յունիսի 23-ի թիվ 33/6

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՍՈՒՏՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆԸ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵՎԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ (ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ) ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի գ) կետի պահանջով՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Հաստատել բյուջետային և արտաբյուջետային մուտքերի ապահովմանը և բյուջետային ու արտաբյուջետային միջոցների օգտագործմանն ուղղված ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի մաքսային ծառայության մասով տարածքային ստորաբաժանումների (ընտրանքային) գործառույթների նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ի. ԶԱԹԱՐՅԱՆ



Հավելված

Հաստատվել է ՀՀ ՎՊԻ Խորհրդի

2011թ. դեկտեմբերի 23-ի թիվ 33/6 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ

Բյուջետային և արտաբյուջետային մուտքերի ապահովմանը և բյուջետային ու արտաբյուջետային միջոցների օգտագործմանն ուղղված ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի մաքսային ծառայության մասով տարածքային ստորաբաժանումների (ընտրանքային) գործառույթների նկատմամբ վերահսկողության արդյունքների վերաբերյալ

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վերահսկողության հիմքը՝ ՀՀ վերահսկիչ պալատի 2011թ. գործունեության տարեկան ծրագրի 8-րդ կետը և ՀՀ վերահսկիչ պալատի Խորհրդի 2011թ. մայիսի 30-ի թիվ 18/2 որոշումը:

Վերահսկողության նպատակը՝ Բյուջետային և արտաբյուջետային մուտքերի ապահովմանը և բյուջետային ու արտաբյուջետային միջոցների օգտագործմանն ուղղված ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի մաքսային ծառայության մասով տարածքային ստորաբաժանումների (ընտրանքային) գործառույթների նկատմամբ համապատասխանության և արդյունավետության ուսումնասիրություն:

Վերահսկողության առարկան՝ Բյուջետային և արտաբյուջետային մուտքերի ապահովմանը և բյուջետային ու արտաբյուջետային միջոցների օգտագործմանն ուղղված ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի մաքսային ծառայության մասով տարածքային ստորաբաժանումների (ընտրանքային) գործառույթներ:

Վերահսկողության օբյեկտը՝ Բյուջետային և արտաբյուջետային մուտքերի ապահովմանը և բյուջետային ու արտաբյուջետային միջոցների օգտագործմանն ուղղված ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի մաքսային ծառայության մասով տարածքային ստորաբաժանումներ (ընտրանքային):

Վերահսկողության կատարման ժամկետը՝ 01.06.2011-30.12.2011թթ.:

Վերահսկողությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 01.01.2010թ.-ից մինչև 01.10.2011թ.-ը:

Վերահսկողության մեթոդաբանությունը՝ Վերահսկողությունն իրականացվել է՝ դիտարկման և վերլուծության ձևով, ինչպես նաև կիրառվել են արդյունավետության (կատարողական) և համապատասխանության տեսակները: Վերլուծության փուլում ամփոփվել և վերլուծվել են դիտարկման արդյունքում ստացված տվյալները:

Վերահսկողությամբ արձանագրվել է.

2010թ. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին (այսուհետ՝ ՊԵԿ) պետական բյուջեով նախատեսվել է 9,651.1 մլն դրամ, (այդ թվում պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ հողվածով՝ 947.6 մլն դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 940.6 մլն դրամ, փաստացի ծախսը՝ 917.2 մլն դրամ, դեբիտորական պարտքը՝ 23.4 մլն դրամ), այդ թվում կենտրոնական ապարատի ծախսեր՝ 3,890.6 մլն դրամ, մաքսատների ծախսեր՝ 1,389.1 մլն դրամ, այդ թվում Արարատյան մաքսատուն 208.5 մլն դրամ, Չվարթնոց մաքսատուն՝ 271.5 մլն դրամ: Փաստացի ծախսը կազմել է 9,640.4 մլն դրամ, այդ թվում կենտրոնական ապարատ՝ 3,890.6 մլն դրամ, մաքսատներ՝ 1,379.4 մլն դրամ, այդ թվում Արարատյան մաքսատուն 208.5 մլն դրամ, Չվարթնոց մաքսատուն՝ 268,3 մլն դրամ:

2011թ. ՊԵԿ-ին պետական բյուջեով նախատեսվել է 9,711.6 մլն դրամ, այդ թվում կենտրոնական ապարատի ծախսեր՝ 4,357.9 մլն դրամ, մաքսատների ծախսեր՝ 1,282.5 մլն դրամ, այդ թվում Արարատյան մաքսատուն՝ 179.7 մլն դրամ, Չվարթնոց մաքսատուն 252.1 մլն դրամ: Ինն ամիսների փաստացի ծախսը կազմել է 6,419.1 մլն դրամ, այդ թվում կենտրոնական ապարատ՝ 2,438.7 մլն դրամ, մաքսատներ՝ 1,009.4 մլն դրամ, այդ թվում Արարատյան մաքսատուն՝ 142.7 մլն դրամ, Չվարթնոց մաքսատուն՝ 196.2 մլն դրամ:

Մաքսային մարմինների փաստացի արտաբյուջետային մուտքը 2010թ. կազմել է 2,855.4 մլն դրամ, որը նախորդ տարվա նկատմամբ պակաս է 39.9 մլն դրամով, իսկ 2011թ. ինն ամիսների նույն ցուցանիշը կազմել է 2,702.9 մլն դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ավելի է 206.0 մլն դրամով:

Արտաբյուջետային միջոցները օգտագործվել են հիմնականում աշխատավարձի և կապիտալ ծախսերի նպատակով, որն 2010թ. համապատասխանաբար կազմել է 1,193.9 և 1,457.6 մլն դրամ, 2011թ. ինն ամիսների նույն ցուցանիշը կազմել է համապատասխանաբար 557.1 և 965.8 մլն դրամ:

2010թ. ՊԵԿ մաքսատների և մաքսային կետերի կողմից ձևակերպում ստացած հարկման ենթակա ներմուծման ծավալը կազմել է 1,106,031.0 մլն դրամ, այդ թվում Արարատյան մաքսատուն՝

574,120.0 մլն դրամ (52 %), Ջվարթնոց մաքսատուն՝ 103,591.0 մլն դրամ (9,4 %), նախորդ տարվա (978,727.0 մլն դրամ) համեմատությամբ 127,304.0 մլն դրամով ավելի, այդ թվում Արարատյան մաքսատուն՝ 70,295.0 մլն դրամով ավելի: Ջվարթնոց մաքսատան կողմից ձևակերպում ստացած հարկման ենթակա ներմուծման ծավալը նվազել է 16,668.0 մլն դրամով:

2011թ. ինն ամիսներին համապատասխան ձևակերպում են ստացել 837,406.9 մլն դրամի հարկման ենթակա ներմուծված ապրանքներ, (որը ավելի է նախորդ տարվա համադրելի ժամանակահատվածի նույն ցուցանիշի նկատմամբ 42,124.6 մլն դրամով) այդ թվում Արարատյան մաքսատուն՝ 407,845.1 մլն դրամ (48.7 %), Ջվարթնոց մաքսատուն՝ 83,552.5 մլն դրամ (10 %):

2010թ. ՀՀ պետական բյուջե գանձված գումարը կազմել է 255,428.1 մլն դրամ, այդ թվում Արարատյան մաքսատուն՝ 117,190.1 մլն դրամ, Ջվարթնոց մաքսատուն՝ 18,515.0 մլն դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավելի է 27,227.5 մլն դրամով, այդ թվում Արարատյան մաքսատուն՝ 13,952.8 մլն դրամ, Ջվարթնոց մաքսատուն՝ 817.3 մլն դրամ:

2011թ. ինն ամիսներին ՀՀ պետական բյուջե գանձված գումարը կազմել է 207,218.7 մլն դրամ, այդ թվում Արարատյան մաքսատան միջոցով 91,213.7 մլն դրամ (44 %), Ջվարթնոց մաքսատան միջոցով 13,071.5 մլն դրամ (6.3 %), որը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ ավելի է 13,206.3 մլն դրամով, այդ թվում Արարատյան և Ջվարթնոց մաքսատների միջոցով պետական բյուջե գանձումները նվազել են համապատասխանաբար՝ 4,162.4 մլն դրամով և 2,053.1 մլն դրամով:

Արտաքին առևտրով ՀՀ-ից արտահանված ապրանքների ընդհանուր ծավալը 2010թ. կազմել է 379,629.0 մլն դրամ, այդ թվում Արարատյան մաքսատան միջոցով 89,652.0 մլն դրամ (23,6 %), Ջվարթնոց մաքսատան միջոցով 66,854.0 մլն դրամ (17,6 %): Նախորդ տարվա նկատմամբ ծավալն ավելացել է 97,424.0 մլն դրամով, այդ թվում Արարատյան մաքսատան միջոցով 2,648.0 մլն դրամ: Ջվարթնոց մաքսատան միջոցով արտահանված ապրանքների ծավալը նվազել է 7,139.0 մլն դրամով:

2011թ. ինն ամիսներին արտահանման ծավալը կազմել է 363,961.2 մլն դրամ, այդ թվում Արարատյան մաքսատան միջոցով 94,361.8 մլն դրամ (25.9 %), Ջվարթնոց մաքսատան միջոցով 72,737.9 մլն դրամ (20%): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ արտահանման ծավալն ավելացել է 96,169.3 մլն դրամով, այդ թվում Արարատյան մաքսատան միջոցով 30,847.4 մլն դրամ, Ջվարթնոց մաքսատան միջոցով 25,605.0 մլն դրամ:

2010թ. հունվարի 1-ի դրությամբ մաքսային մարմիններում հաշվառված արտաքին տնտեսական գործունեություն (այսուհետ՝ ԱՏԳ) իրականացնող ակտիվ (վերջին 1 տարում առնվազն 1 գործարք իրականացրած) սուբյեկտների թիվը կազմել է 4554, 2011թ. հունվարի 1-ի

դրությամբ՝ 4930, որոնցից Արարատյան մաքսատանը գործարք են իրականացրել 2513-ը, Չվարթնոց մաքսատանը՝ 2151-ը:

Ըստ ՊԵԿ կողմից տրամադրված տեղեկատվության, 2010թ. արձանագրվել է մաքսային կանոնների խախտման 2436 դեպք: Տուգանքի գումարը կազմել է 2,574.6 մլն դրամ, որից գանձվել է 637.4 մլն դրամ կամ 25%:

2011թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում արձանագրվել է մաքսային կանոնների խախտման 1351 դեպք, տուգանքի գումարը կազմել է 266.1 մլն դրամ, որից գանձվել է 107.9 մլն դրամը կամ 47,3%:

2010թ. ընթացքում ՊԵԿ հետաքննության վարչությունում քննվել է իրավախախտման 415 դեպք, որի արդյունքում պետական բյուջե է գանձվել 441.3 մլն դրամ, որից 137.5 մլն դրամը՝ 133 մաքսային կանոնների խախտման դեպքով հարուցված վարչական վարույթներով, իսկ 303.8 մլն դրամը՝ թերի վճարված մաքսային վճարների գումարներ:

2011թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում ՊԵԿ հետաքննության վարչությունում քննվել է իրավախախտման 216 դեպք, գանձվել է 194.6 մլն դրամ:

ՊԵԿ նախարացթողումային վարչության 2009-2010թթ. և 2011թ. հունվար-սեպտեմբեր ամիսների գործունեության վերաբերյալ տեղեկատվության ուսումնասիրությունից պարզվել է, որ վարչության կողմից հայտնաբերված տարբեր իրավախախտումների՝ մասնավորապես, թաքցված, չհայտարարագրված կամ սխալ հայտարարագրված բեռների, սխալ հայտարարագրված երկրի, քաշի, քանակի և այլ իրավախախտումների բացահայտման արդյունքում 2009թ. պետական բյուջե է գանձվել 23,067.2 հազ. դրամ, 2010թ.՝ 168,206.8 հազ. դրամ, 2011թ. ինն ամիսներին՝ 23,097.4 հազ. դրամ:

Ներկայացված տվյալները խոսում են մաքսային մարմինների կողմից 2010թ. իրականացված աշխատանքների արդյունավետության բարձրացման մասին:

Տրամադրված տեղեկությունների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ

1. Ավելացել է ՀՀ մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 87-րդ հոդվածի կիրառմամբ մաքսային արժեքի որոշման (գործարքի գնով) գործընթացը:

2009թ-ին օրենսգրքի 87-րդ հոդվածի կիրառման համար ներկայացված 8406 դիմումից բավարարվել է 8081-ը կամ 96%-ը, 2010թ-ին՝ 11636 դիմումից բավարարվել է 11408-ը կամ 98%-ը, իսկ 2011 թվականի 1-ին կիսամյակում ներկայացված 5990 դիմումներից բավարարվել է ավելի քան 5900-ը, կամ 98,5%, որը հիմնականում մաքսային մարմիններում իրականացվող բարեփոխումների արդյունք է: Աճի դինամիկա ունի նաև օրենսգրքի 87-րդ հոդվածի հիման վրա ձևակերպված գործարքների հարաբերությունը ներմուծման գործարքների ընդհանուր թվաքանակի նկատմամբ:

Այդ ցուցանիշը 2009 թվականին կազմել է 61%, 2010 թվականին՝ 66%, իսկ 2011 ինն ամիսներին աճել է մինչև 68%,

Արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտների կողմից մաքսային մարմիններին ներկայացվող, ապրանքների ձեռք բերման փաստաթղթերի արժանահավատությունը ստուգվում է հետքացթողումային հսկողության իրականացման, հիմնականում այլ երկրների մաքսային մարմիններին ուղղվող հարցումների միջոցով: 2010թ. հարցումների թիվը կազմել է 316, 2011թ. ինն ամիսներին՝ 166:

Ուսումնասիրությունից պարզվել է, որ Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրում գրեթե 40% ծավալ ունեցող այնպիսի երկրներ, ինչպիսիք են, Չինաստանը, Իրանը, ՄԱԷ-ը, Թուրքիան, Գերմանիան, ԱՄՆ, Հարավային Կորեան (և այլն) առհասարակ չեն պատասխանել իրենց ուղղված հարցումներին: Մնացած երկրները պատասխանել են հարցումների 70%-ին կամ հարցումների 30%-ին պատասխաններ չեն տրվել:

Արդյունքում ստացվում է, որ հարցումների միջոցով չի ճշտվել ընդհանուր ներմուծումների ծավալի ավելի քան 50%-ի հետ կապված տեղեկությունը, ինչը բավարար չէ հետքացթողումային մաքսային հսկողության արդյունավետության ապահովման համար:

Հետքացթողումային հսկողության իրականացման շրջանակներում ստացված տեղեկությունները ցույց են տալիս, որ ներմուծողների կողմից մաքսային ձևակերպումների համար ներկայացվող հաշիվ-ապրանքագրերի արժանահավատությունը շարունակում է պարունակել զգալի ռիսկեր, բյուջեի մուտքերի ապահովման տեսանկյունից, ինչպես օրինակ ստորև նշված դեպքերում է.

“Ինտերպորտ “ ՍՊԸ - ն 2010թ. Իտալիայից ՀՀ մաքսային տարածք է ներմուծել 29 կոմպլեկտ 1421 եվրո արժեքով դռներ (1 հատը 49 եվրո): Իտալիայի մաքսային մարմիններից ստացված հաշիվ-ապրանքագրի համաձայն ապրանքների արժեքը կազմել է 20 859 եվրո (1 հատը 719 եվրո): Հետքացթողումային հսկողության շրջանակներում իրականացված հարցման արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա պետական բյուջե է գաձվել 3,430.0 հազ. դրամ:

“Բիտարմինդ” ՍՊԸ-ն 2009թ. Դանիայից ՀՀ մաքսային տարածք է ներմուծել 10 650 կգ քաշով 22 760 ԱՄՆ դոլար արժեքով ֆերմենտներ (1 կգ 2,6 \$), սակայն Դանիայի մաքսային մարմիններից ստացված հաշիվ-ապրանքագրի համաձայն ֆերմենտների արժեքն իրականում կազմել է 50 655 ԱՄՆ դոլար, (1 կգ 4,76 \$): Նույն կազմակերպությունը 2010թ. Դանիայից ՀՀ մաքսային տարածք է ներմուծել 11 230 կգ քաշով 28 590 ԱՄՆ դոլար արժեքով ֆերմենտներ (1 կգ 2,54 \$), սակայն Դանիայի մաքսային մարմիններից ստացված հաշիվ-ապրանքագրի համաձայն ֆերմենտների արժեքն իրականում կազմել է 52 357 ԱՄՆ դոլար, (1 կգ 4,66 \$)

“Բիտարմինդ” ՍՊԸ-ն 2010թ. Դանիայից ՀՀ մաքսային տարածք է ներմուծել 10 650 կգ քաշով 22 605 ԱՄՆ դոլար արժեքով ֆերմենտներ (1 կգ 2,4 \$), սակայն Դանիայի մաքսային մարմիններից ստացված հաշիվ-ապրանքագրի համաձայն ֆերմենտների արժեքն իրականում կազմել է 52 407.03 ԱՄՆ դոլար, (1 կգ 4,9 \$)

Վերը նշված կազմակերպության նկատմամբ հետքացթողումային հսկողությունն իրականացվել է 2011թ., որի շրջանակներում իրականացված հարցման արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա պետական բյուջե է գաձվել 8,885.0 հազ. դրամ:

“Հինգ Աստղ” ՍՊԸ-ն 2010թ. Իսպանիայից ՀՀ տարածք է ներմուծել 66 931 կգ քաշով 152 100 եվրո արժեքով կերամիկական երեսապատման սալիկներ և սանտեխնիկա (1 կգ 2.27 եվրո): Իսպանիայի մաքսային մարմիններից ստացված հաշիվ ապրանքագրերի համաձայն նշված ապրանքների արժեքը կազմել է 245 074 եվրո (1 կգ 3,66 եվրո): Հետքացթողումային հսկողության շրջանակներում իրականացված հարցման արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա պետական բյուջե է գաձվել 12,880.0 հազ. դրամ:

“Վիկտորիա Կոնցեռն” ՍՊԸ-ն 2010թ. Ուկրաինայից ՀՀ մաքսային տարածք է ներմուծել 101 000 կգ քաշով 30 345 եվրո արժեքվ նրբատախտակ և ԴՎՊ (1 կգ 0,30 եվրո): Ուկրաինայի մաքսային մարմիններից ստացված հաշիվ-ապրանքագրերի համաձայն ապրանքների արժեքը կազմել է 45 674 եվրո (1 կգ 0,45 եվրո): Հետքացթողումային հսկողության շրջանակներում իրականացված հարցման արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա պետական բյուջե է գաձվել 1,890.0 հազ. դրամ:

“Մ ԸՆԴ Դ ՖՐԵՆԴՍ” ՍՊԸ-ն 2010թ. Լիտվայից ՀՀ մաքսային տարածք է ներմուծել 31 980 կգ քաշով 24 492 եվրո արժեքվ բիլիարդի սեղաններ և արստուարներ (1 կգ 0,77 եվրո): Լիտվայի մաքսային մարմիններից ստացված հաշիվ-ապրանքագրերի համաձայն ապրանքների արժեքը կազմել է 74 610 եվրո (1 կգ 2,33 եվրո): Հետքացթողումային հսկողության շրջանակներում իրականացված հարցման արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա պետական բյուջե է գաձվել 11,740.0 հազ. դրամ:

“Սարգիս-Սիքայել” ՍՊԸ-ն 2010թ. Վրաստանից ՀՀ մաքսային տարածք է ներմուծել 3 400 կգ քաշով 11 375 ԱՄՆ դոլար արժեքվ կրակայրիչներ (1 կգ 3,35 ԱՄՆ դոլար): Վրաստանի մաքսային մարմիններից ստացված հաշիվ-ապրանքագրերի համաձայն ապրանքների արժեքը կազմել է 24 300 ԱՄՆ դոլար (1 կգ 7,15 ԱՄՆ դոլար): Հետքացթողումային հսկողության շրջանակներում իրականացված հարցման արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա պետական բյուջե է գաձվել 770.0 հազ. դրամ:

Ընդհանուր առմամբ 2010թ. հետքացքողումային հսկողության իրականացման արդյունքում հաշվարկվել է 427 մլն դրամ պետական բյուջե գանձման ենթակա գումար (գանձվել է 285 մլն դրամ), 2011թ. ինն ամիսների ընթացքում հաշվարկվել է 513.4 մլն դրամ (գանձվել է 312.4 մլն դրամ):

Վերը նշված փաստերից ելնելով անհրաժեշտ է մաքսային բարեփոխումների իրականացման գործընթացին համընթաց միջոցներ ձեռնարկել տնտեսվարող սուբյեկտների, ինչպես մաքսային մարմիններին տրամադրվող փաստաթղթերին ներկայացվող պահանջների, այնպես էլ դրանց պատասխանատվության բարձրացման նկատմամբ:

2. ՀՀ Մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի 6-րդ և 6.1 կետով նախատեսված են մաքսային արտոնություններ: 6-րդ կետով նախատեսված արտոնությունները վերահսկելի են և դրանց կրկնակի տրամադրումը (սահմանված 5 տարի ժամկետում) գործող տեղեկատվական համապատասխան բազայի առկայության պարագայում հնարավոր չէ:

Նույնը չի կարելի ասել 6.1 կետով նախատեսված անձանց (ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններում ծառայող դիվանագետներ և ՀՀ դիվանագիտական ծառայությանը կից գործող ռազմական, առևտրական և այլ կցորդներ, Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու այլ երկրների թեմերում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից հոգևոր ծառայության նշանակված քաղաքացիներ) տրամադրվող արտոնության վերաբերյալ, քանի որ օրենսդրությամբ նշված չէ, թե քաղաքացին ծառայության ավարտից հետո ինչ ժամանակահատվածում և քանի անգամ կարող է ներմուծել իր անձնական օգտագործման գույքը, ինչպես նաև բացակայում է համապատասխան տեղեկատվական բազան: Այս պարագայում չի բացառվում միևնույն անձին ծառայությունից հետո կրկնակի արտոնություն տրամադրելու հնարավորությունը: Արդյունքում սահմանված մաքսավճարների չափով չեն ապահովվի պետական բյուջեի մուտքերը:

3. Վերահսկողության ժամանակահատվածում (համաձայն տեղեկատվության) մաքսային հսկողության տարածքներում և մաքսային պահեստներում առկա են «ոչնչացում» մաքսային ռեժիմով հայտարարագրված շուրջ 4,5 տոննա դեղերի խմբաքանակներ, որոնց հիմնական մասը (4,27 տոննա, մաքսային արժեքը 34.9 մլն դրամ) 2011թ. ընթացքում ներկրվել է թվով 2 կազմակերպությունների կողմից: Դեղերի հիմնական խմբաքանակը (4.24 տոննա, մաքսային արժեքը 28.1 մլն դրամ) ներմուծման պահին արդեն իսկ եղել է ժամկետանց, մնացածը Հայաստանի Հանրապետությունում գրանցված չեն եղել:

Դեղերի ոչնչացման գործընթացը կարգավորող լիազորված մարմինը համաձայն ՀՀ կառավարության 31 հուլիսի 1999 թվականի թիվ 487 որոշման ՀՀ բնապահպանության նախարարությունն է, որը դեռևս չի լիազորել որևէ սուբյեկտի՝ իրականացնելու դեղերի ոչնչացումը:

Փաստորեն ՀՀ մաքսային տարածք տեղափոխված և «ոչնչացում» մաքսային ռեժիմով հայտարարագրված դեղերը մինչև ոչնչացման իրականացումը պահպանվում են մաքսային հսկողության տարածքներում կամ մաքսային պահեստներում, որոնց պահպանման համար վճարումները պահպանությունն իրականացնող կազմակերպություններին կատարվում է ներկրող անձանց կողմից:

Ոչնչացման ենթակա դեղերի երկարաժամկետ պահպանումը կարող է բերել բնապահպանական որոշ խնդիրների առաջացմանը:

4. Վերահսկողության ժամանակահատվածում մաքսային հսկողության տարածքներում և մաքսային պահեստներում (համաձայն տրված տեղեկատվության) առկա է ԴԱՀԿ վարույթներով արգելադրված շուրջ 60 տոննա շուտ փչացող ապրանք, որի զգալի մասն արդեն պիտանի չէ հետագա օգտագործման, հետևարար մակ իրացման համար:

Շուտ փչացող ապրանքները ԴԱՀԿ-ն իրավասու է իրացնել և ստացված միջոցները մուտքագրել դեպոզիտային հատուկ հաշիվ՝ վարույթի ավարտից հետո դրանց տնօրինման նպատակով: Սակայն, նշված ապրանքների իրացումն օպերատիվ չկազմակերպելու պատճառով, դրանք մինչև համապատասխան վարույթի ավարտը հիմնականում կորցնում են իրենց որակական հատկանիշները, ինչի արդյունքում դառնում են իրացման համար ոչ պիտանի և դրանց մասով պետական բյուջեն չի համալրվում համապատասխան միջոցներով:

Հարկ է նշել, որ ՊԵԿ նախագահի հրամանով ստեղծված հատուկ իրացման կետի միջոցով օրենսդրությամբ սահմանված կարգով, 2010թ. իրացվել է 5,590.0 հազ. դրամի, իսկ 01.10.2011թ. դրությամբ՝ 1,848.0 հազ. դրամի շուտ փչացող ապրանքներ:

Ելնելով վերը նշվածից անհրաժեշտ է ապահովել ՊԵԿ-ի համապատասխան ստորաբաժանումների և ԴԱՀԿ ծառայության համագործակցությունը՝ շուտ փչացող ապրանքների որակագրկումը ժամանակին կանխելու, ինչպես նաև դրանց իրացումը և արդեն իսկ փչացած ապրանքների ոչնչացման աշխատաքներն օպերատիվ կազմակերպելու համար:

Եզրակացություն

1. Մաքսային բարեփոխումների արդյունքում ավելացել է ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածով՝ գործարքի գնով մաքսային արժեքի որոշմամբ մաքսային ձևակերպումների թիվը, բավարարվել է ներկայացված դիմումների 98 տոկոսից ավելին:

2. Հետքացթողումային հսկողության իրականացման նպատակով կատարված հարցումներին չեն պատասխանել այնպիսի երկրներ, ինչպիսիք են Չինաստանը, Իրանը, ՄԱԷ-ը, Թուրքիան,

Գերմանիան, ԱՄՆ-ն, Հարավային Կորեան (և այլն), որոնք ՀՀ արտաքին առևտրում ունեն գրեթե 40% ծավալ, իսկ մնացած երկրները պատասխանել են հարցումների 70 տոկոսին: Արդյունքում հնարավոր չի եղել ապահովել հետբացթողումային հսկողության արդյունավետ իրականացումը, որը կապահովեր բյուջետային լրացուցիչ մուտքեր:

Հետբացթողումային հսկողության իրականացման արդյունքում անհամապատասխանություններ են արձանագրվել գործարքի գնով մաքսային արժեքի որոշմամբ մաքսային ձևակերպում ստացած ինվոյսային արժեքների և հարցման արդյունքում ստացված հաշիվ ապրանքագրերի արժեքների միջև, որի արդյունքում 2010թ. հաշվարկվել է 427 մլն դրամ պետական բյուջե գանձվող գումար (գանձվել է 285 մլն դրամ), 2011թ. ինն ամիսների ընթացքում հաշվարկվել է 513.4 մլն դրամ (գանձվել է 312.4 մլն դրամ):

3. ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի 6.1 կետով նախատեսված արտոնություններից օգտվող անձանց տեղեկատվական բազա ստեղծված չէ, որի արդյունքում հնարավոր է վերը նշված կետով նախատեսված անձանց ծառայությունից հետո արտոնության կրկնակի տրամադրումը, որի արդյունքում համապատասխան մաքսավճարների չափով բյուջետային մուտքեր չեն ապահովվի:

4. Մաքսային մարմինների և դեղերի ոչնչացման գործընթացը կանոնակարգող լիազոր մարմնի համագործակցության, ինչպես նաև վերը նշված գործառույթն իրականացնող սուբյեկտի բացակայության պատճառով մաքսային պահեստներում առկա է չորս տոննայից ավելի դեղեր, որոնց երկարատև պահպանումը կարող է առաջացնել բնապահպանական խնդիրներ:

Հետևողական աշխատանք չի տարվել նաև մաքսային պահեստներում գտնվող շուտ փչացող ապրանքների իրացման ուղղությամբ: Մաքսային պահեստներում առկա են 60 տոննայից ավելի շուտ փչացող ապրանքներ, (այդ թվում Դ-ԱՀԿ ծառայության իրավասության ներքո գտնվող) որոնց ժամանակին իրացումը կապահովեր լրացուցիչ բյուջետային մուտքեր:

Առաջարկություններ

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին.

1. Մաքսային բարեփոխումների գործընթացին համընթաց անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել (այդ թվում նաև իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարել) ինչպես տնտեսվարող սուբյեկտների կողմից մաքսային մարմիններին տրամադրվող փաստաթղթերին ներկայացվող պահանջների, այնպես էլ դրանց պատասխանատվության բարձրացման նկատմամբ:

2. Միջոցառումներ ձեռնարկել ձևավորելու համապատասխան իրավական դաշտ՝ այլ երկրների մաքսային մարմինների հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով:
3. ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի 6.1 կետով նախատեսված անձանց արտոնության կրկնակի տրամադրումը բացառելու նպատակով ստեղծել համապատասխան տեղեկատվական բազա:
4. Իրավասու մարմինների հետ ապահովել պատշաճ համագործակցություն ինչպես դեղերի ոչնչացման, այնպես էլ շուտ փչացող ապրանքների իրացման գործընթացը ժամանակին իրականացնելու ուղղությամբ:

«Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի գ) կետի համաձայն մեկամսյա ժամկետում Վերահսկիչ պալատին գրավոր տեղեկատվություն տրամադրել ընթացիկ հաշվետվությունում ամրագրված՝ հայտնաբերված խախտումները վերացնելու վերաբերյալ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ ՊԱՐՈՆ Դ.ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան.

Ի կատարումն ՀՀ վարչապետի 04.05.2008թ. N 225-Ա որոշման՝ Ձեզ է ներկայացվում ՀՀ վերահսկիչ պալատի 23.12.11թ. թիվ 33/6 որոշմամբ հաստատված ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի մաքսային ծառայության մասով տարածքային ստորաբաժանումների գործառույթների նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությամբ արձանագրված խախտումները ու թերությունները վերացնելու ուղղությամբ ձեռնարկված միջոցների մասին ՊԵԿ կողմից 27.01.12թ. ներկայացված թիվ 01/8-2/655-12 պատասխան գրության օրինակը:

Առդիր՝ 1 ֆայլ:

Հարգանքով՝

Գ.ՍԱՐԳՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

ՀՀ ՎԵՐԱՀՄԿԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ի.ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Զաքարյան.

Ի կատարումն «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» ենթակետի պահանջի՝ Ձեզ է ներկայացվում ՀՀ վերահսկիչ պալատի 23.12.11թ. թիվ 33/6 որոշմամբ հաստատված ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի մաքսային ծառայության մասով տարածքային ստորաբաժանումների գործառույթների նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությամբ արձանագրված խախտումներն ու թերությունները վերացնելու ուղղությամբ ձեռնարկված միջոցների մասին ընթացիկ տեղեկատվությունը:

- Հետբացթողումային հսկողության ընթացքում կատարված հարցումներին չպատասխանած պետությունների մաքսային ծառայությունների հետ համագործակցության համապատասխան իրավական դաշտ ձևավորելու անհրաժեշտության վերաբերյալ տեղեկացնում եմ, որ ներկայումս այլ պետությունների մաքսային ծառայությունների հետ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից արդեն իսկ կնքված են համագործակցության թվով 33 համաձայնագրեր և ևս 20 համաձայնագրերի նախագծեր գտնվում են քննարկման փուլում:

- ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի 6¹ կետով նախատեսված արտոնության միևնույն անձին կրկնակի տրամադրելու հնարավորությունը բացառելու նպատակով համապատասխան տեղեկատվական բազա ստեղծելու կապակցությամբ տեղեկացնում եմ, որ հիշատակված տեղեկատվական բազայի մշակման աշխատանքները գտնվում են ավարտական փուլում:

- Մաքսային հսկողության տարածքներում և մաքսային պահեստներում առկա մոտ 4,5 տոննա ոչնչացման ենթակա դեղերի առկայության կապակցությամբ տեղեկացնում եմ, որ “Ոչնչացում” մաքսային ռեժիմով ՀՀ տարածք ներմուծվող ապրանքների ոչնչացման աշխատանքները կազմակերպող հանձնաժողովի 2011թ. նոյեմբերի 14-ի նիստում մի շարք իրավաբանական և ֆիզ. անձանց կողմից «ոչնչացում» մաքսային ռեժիմով ՀՀ տարածք ներմուծված դեղորայքի և քիմիական այլ նյութերի

(որոնց ոչնչացման աշխատանքները չէին իրականացվել կապված ՀՀ-ում համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպության բացակայության հետ) ոչնչացման աշխատանքների կազմակերպման հարցի վերաբերյալ որոշում է կայացվել աշխատանքները իրականացնել օգտագործելով «Էկոլոգիա ՎՀԿ» ՍՊԸ-ի հնարավորությունները, որը արդեն իսկ ստացել է համապատասխան լիցենզիա: Հանձնաժողովի որոշման հիման վրա 2011թ-ի նոյեմբերի 14-ից դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում «Էկոլոգիա ՎՀԿ» ՍՊԸ-ի միջոցով արդեն իսկ ոչնչացվել է 5951,46 կգ դեղորայք ու քիմիական այլ նյութեր:

- ԴԱՀԿ վարույթներով արգելափակված մոտ 60տ. շուտ փչացող ապրանքների իրացման գործընթացում անհրաժեշտ համագործակցությունը ապահովելու նպատակով համապատասխան գրություն է հղվել ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայություն (պատճենը կցվում է): Արդյունքների մասին ՀՀ Վերահսկիչ պալատին կտեղեկացվի լրացուցիչ:

Հարգանքով՝

Գ.ԽԱՉԱՏՐՅԱՆ



0015 Երևան, Մ. Խորենացու 3, Հեռ.՝ 59 44 44

N 1230/8-2

0015 Yerevan, M. Khorenatsi 3, Tel, 59 44 44

«18 01 2012»

ՀՀ ԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ
ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՊԱՐՈՆ Մ.ՊՈՂՈՍՅԱՆԻՆ


Հարգելի պարոն Պողոսյան.

Տեղեկացնում ենք Ձեզ, որ համաձայն ՀՀ վերահսկիչ պալատի 23.12.11թ. թիվ 33/6 որոշմամբ հաստատված ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի մաքսային ծառայության մասով տարածքային ստորաբաժանումների գործառույթների նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվության՝ որպես թերություն է արձանագրվել մաքսային հսկողության տարածքներում և մաքսային պահեստներում ԴԱՀԿ վարույթներով արգելափակված մոտ 60տ. շուտ փչացող ապրանքների առկայությունը: Հաշվետվությունում նշվում է, որ ԴԱՀԿ ծառայությունը իրավասու է իրացնել դրանք ու գոյացած միջոցները մուտքագրել դեպոզիտային հատուկ հաշիվ, սակայն աշխատանքները օպերատիվ չկազմակերպելու արդյունքում ապրանքների մի մասը արդեն իսկ ենթակա չէ օգտագործման համար, արդյունքում էլ պետական բյուջեն չի համալրվում այդ մասով համապատասխան միջոցներով: Առաջարկվել է ապահովել պատշաճ համագործակցություն շուտ փչացող ապրանքների իրացման գործընթացը ժամանակին իրականացնելու համար:

Տեղեկացնում ենք, որ հիշատակված համագործակցությունը ապահովելու համար ՊԵԿ կողմից լիազորված է Իրավաբանական վարչությունը (ՄԳ բաժնի պետ Կ.Կարապետյան, հեռ. 594-712):

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ վարչապետի 04.05.2008թ. N 225-Ա որոշմամբ՝ խնդրում ենք հայտնել ԴԱՀԿ ծառայության կողմից լիազորված ստորաբաժանման և պատասխանատու պաշտոնատար անձի տվյալները՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 3-րդ կետի 2-րդ պարբերությամբ նախատեսված կարգով մաքսային հսկողության տարածքներում և մաքսային պահեստներում ԴԱՀԿ վարույթներով արգելափակված շուտ փչացող ապրանքների իրացման գործընթացը ժամանակին իրականացնելու համար:

Հարգանքով՝
Մ/Ծ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ

 Ա.ԱՖՐԻԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

ՀՀ կառավարության
աշխատակազմի ղեկավար
պարոն Դավիթ Սարգսյանին

Հարգելի պարոն Սարգսյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի ս/թ փետրվարի 8-ի թիվ 02/23.16/1720-13 հանձնարարականի կից Ձեզ է ներկայացվում ՀՀ վերահսկիչ պալատի 2011 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 33/6 որոշմամբ հաստատված հաշվետվության «Առաջարկություններ» բաժնի 1-ին կետում նշված հարցի լուծման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ տեղեկատվություն:

Առդիր 1 էջ:

Հարգանքով՝

Գ. Խաչատրյան

Ձեռնարկված միջոցների վերաբերյալ տեղեկատվություն

Մաքսային մարմիններին ներկայացվող մաքսային հսկողության համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկությունների հստակեցման նպատակով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 1-ի N1687-Ն և ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 2-ի N906-Ն որոշումներով փոփոխություններ է կատարվել ՀՀ կառավարության 2003 թվականի նոյեմբերի 21-ի “Մաքսային հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ու տեղեկությունների ցանկերը և դրանք մաքսային մարմիններին տրամադրելու կարգը սահմանելու մասին” 1779-Ն որոշման մեջ:

Մասնավորապես, հանվել է ՀՀ մաքսատներում՝ որպես արտաքին տնտեսական գործունեության մասնակից գրանցվելու համար անհրաժեշտ փաստաթղթերը և մաքսային գործի հետ կապված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնող անձանցից պահանջվող գործունեության տվյալ տեսակով զբաղվելու լիցենզիան (պատճենը) ներկայացնելու պահանջը, ինչպես նաև հանվել է մաքսային արժեքի մանրամասնությունների հայտարարագրի ՄՀ 1 ձևը ներկայացնելու պահանջը:

«Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-224-Ն օրենքով փոփոխություն է կատարվել ՀՀ մաքսային օրենսգրքի մաքսային կանոնների խախտման վերաբերյալ դրույթներում, որով հստակեցվել է մաքսային կանոնների խախտման դեպքերը և դրանց համար սահմանված պատասխանատվության միջոցները:

Միաժամանակ, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում մեկնարկած ԹՎԻԻՆԳ ծրագրի շրջանակներում իրականացվում են ՀՀ մաքսային օրենսդրության՝ ԵՄ չափանիշներին համապատասխանեցման գծով աշխատանքներ, որի շրջանակներում նախատեսվում է նաև ՀՀ մաքսային օրենսգրքում համապատասխան փոփոխություններ կատարել՝ մաքսային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողությունն ուժեղացնելու նպատակով: